

ՀՀ «ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ  
7-9-րդ դասարաններ

Կենսաբանությունն առարկայի ծրագիր

**Առարկայի ուսուցման նպատակը, ընդհանուր և կոնկրետ դասարանում լուծվող խնդիրները**

Կենսաբանությունն ուսումնասիրում է Երկրի ողջ կյանքի բազմազանությունը՝ բույսերի, կենդանիների, սնկերի, մանրէների, մարդու, բջջի կառուցվածքային և կենսագործունեության առանձնահատկությունները:

«Կենսաբանություն» առարկայի ուսուցման նպատակն է.

- ծանոթացնել կենդանիների բազմազանությանը, կենսագործունեության առանձնահատկություններին,
- ձևավորել և զարգացնել գիտելիքներ կենդանի - բնություն կապի, փոխներգործության մասին,
- ուսուցանել գիտելիքներ մարդու օրգան-համակարգային կառուցվածքի և ֆունկցիաների, ինչպես նաև սպառնացող հիվանդությունների մասին,
- ընդլայնել գիտելիքներն առողջ ապրելակերպի կանոնների, վնասակար սովորություններից զերծ մնալու (ծխել, ալկոհոլ, թմրանյութեր), վնասվածքների դեպքում առաջին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ,
- ուսուցանել և զարգացնել կարողություններ և հմտություններ ընդհանուր կենսաբանության մասին՝ կյանքի ծագման, կենդանի օրգանիզմների բջջային կառուցվածքի, ժառանգականության օրինաչափության, նյութերի և էներգիայի փոխանակության մասին,
- սովորողի մեջ սերմանել խելամիտ և հարգալից վերաբերմունք բնական միջավայրի նկատմամբ, նպաստել էկոլոգիական դաստիարակության և էկոլոգիական խնդիրների լուծմանը, ձևավորել
- կապ հաստատել բնագիտական այլ առարկաների հետ՝ իրականացնելով միջառարկայական փորձեր
- իրականացնել օտար լեզուների կիրառումը՝ բնագիտական նյութերի թարգմանության ընթացքում:
- ծանոթացնել կիրառական կենսաբանության ճյուղերի հետ՝ հատկապես ՀՀ- ում
- ստեղծել ուսումնական նյութեր

Կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և մատուցված նյութը սովորողի սեփականությունը դարձնելու նպատակով, կիրառվում են բազմաթիվ լաբորատոր - գործնական աշխատանքներ՝ շրջապատող միջավայրում գտնվող կենդանի օրգանիզմների գնում, դիտարկում, մանրադիտակային հետազոտում, ուսումնական ճամփորդությունների կազմակերպում:

**Բովանդակությունն ըստ դասարանների**

**Թեմատիկ պլան - 7 – րդ դասարան (68 ժամ, շաբաթական 2 ժամ)** Դասընթացի նպատակն է ուսուցանել հմտություններ և կարողություններ կենդանի օրգանիզմների կառուցվածքի, կեսագործունեության առանձնահատկությունների, շրջապատող բնության հետ փոխհարաբերությունների մասին:

**Թեմատիկ պլան –8-րդ դասարան (68 ժամ, շաբաթական 2 ժամ)**

Դասընթացի նպատակն է ուսուցանել հմտություններ և կարողություններ մարդու օրգանիզմի կառուցվածքի, կեսագործունեության առանձնահատկությունների մասին: Ընդլայնել առողջ ապրելակերպի, ճիշտ սնման, հիգիենայի հիմնական կանոնների մասին ինֆորմացիան, զարգացնել վնասակար սովորություններից զերծ մնալու և օրգանների վնասվածքների դեպքում ինքնուրույն կողմնորոշվելու և օգնություն ցույց տալու կարողություններ և հմտություններ:

**Թեմատիկ պլան– 9 –րդ դասարան (34 ժամ, շաբաթական 1 ժամ)**

Դասընթացի նպատակն է ուսուցանել հմտություններ և կարողություններ ընդհանուր կենսաբանության՝ կյանքի ծագման և զարգացման օրինաչափությունների, կենդանի նյութի կազմավորման մակարդակների, էներգիաների փոխանակության մասին: Ծանոթացնել ժառանգականության և փոփոխականության հիմնական օրինաչափություններին, կենդանիների, բույսերի և մանրէների սելեկցիայի հիմնախնդիրներին:

**այդ թվում նաև՝ մեդիամիջոցների (գործիքների, համակարգչային ծրագրերի, կրթահամալիրի կայքի) գործածության հմտություններ**

**SZS-ների օգտագործում:** Հաշվի առնելով սովորողների նախասիրությունները, դասավանդողի կողմից, , ընտրվում են տարբեր թեմաներ, նյութեր, , համացանցից նոր նյութերի հայթայթում և քննարկում, տեսանյութերի ցուցադրում, բանավեճերի, վիկտորինաների, մրցույթների, խաղերի կազմակերպում:

Այսպիսով, սովորողը ստանում է կայուն գիտելիք՝ հիմնված իր իսկ կատարած փորձերի և դիտարկումների վրա:

Կատարած հետազոտությունների, դիտարկումների, փորձերի, ուսումնական ճանփորդությունների վերաբերյալ պատրաստվում են նյութեր, որոցինց լավագույները տեղադրվում են կրթահամալիրի կայքում:

Յուրաքանչյուր դասարան ունենում է իր բլոգը, որը կառավարում է դասավանդողը, անհրաժեշտության դեպքում լիազորված է կատարել ուղղումներ՝ սովորողի հետ քննարկելուց և համաձայնեցնելուց հետո: Բլոգում տեղադրվում են սովորողների կատարած աշխատանքները, թարգմանությունները, կատարվում են քննարկումներ , գրվում են քումենթներ:

Նախատեսված թեմաները էլեկտրոնային փոստով տրամադրվում են սովորողներին: Յուրաքանչյուր տեքստին կցված են համապատասխան թեստերը, որոնք սովորողը պետք է լրացնի նյութը պատրաստելուց հետո՝ ստացած ինֆորմացիան ամրապնդելու նպատակով: Նյութերը հետ են ուղարկվում դասավանդողին՝ ստուգելու համար կամ քննարկվում են դասարանում:

## **Դասավանդողի և սովորողի կողմից օգտագործվող թվային միջոցները և դրանց գործածման ոլորտները**

### **1. Էլեկտրոնային գրատախտակ - պրոյեկտոր**

- Ֆիլմերի, ուսումնական նյութերի դիտում, ներկայացում, քննարկում
- Ուսումնական խաղեր
- Smart Notebook, Power Point ծրագրով պատրաստած դասերի դիտում, օգտագործում, քննարկում

### **2. Էլեկտրոնային գրիչներ**

- Թեթետերի կատարում
- Վիկտորինաների պատրաստում և կատարում

### **3. Թվային ֆոտոխցիկ- տեսախցիկ**

- Նյութերին կցվող լուսանկարների համար
- Ուսումնական ճամբորդությունների, հասարակական նախագծերի հաշվետվության համար
- Ֆիլմերի, տեսահոլովակների պատրաստում

### **4. Անհատական նութբուք-նեթբուք**

- Առցանց աշխատանքի իրականացում դասարանում և տանը

## **Ուսումնական օրացույց**

Ուսումնական օրացույցով որոշված բոլոր միջոցառումներին սովորողների և դասավանդողների մասնակցության համար նյութերի, փորձերի, նախագծերի պատրաստումը և իրականացումը խրախուսվում է տարբեր մրցանակներով՝ ուսումնա – հետազոտական ճամփորդություններ, ճամբարներ, ՏՏ-գործիքներ դրամական վաուչերներ, (որոնք օգտագործվում են նոր ՏՀՏ-ներ ձեռք բերելու համար): Նախատեսված միջոցառումներն և սովորողների, դասավանդողների կատարվող աշխատանքները՝

1. Մեդիաօլիմպիադայի առաջադրանքների ստեղծում և կատարում, սովորողների կատարած աշխատանքի ստուգում

2. Հանրակրթական Դիջիտալ 2012- տեսաֆիլմերի, հոլովակների պատրաստում
3. Հեղինակային մանկավարժության ամենամյա հոկտեմբերյան-հոդվածներ, ուսումնահետազոտական աշխատանքներ
4. Մխիթար Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոնը – մրցաշարերի մասնակցություն
9. Զատկական ծաին մասնակցություն՝ ածիկների ցանում, ձևավորում
10. Հեղինակային մանկավարժության ամենամյա մայիսյան մեդիահավաք - բաց դասերին մասնակցությունը, ինչպես նաև որպես փորձագետ այլ դասերին հանդես գալը՝ դասալսում և լուսաբանում, հոդվածներ, նյութեր
11. Ամառային ուսումնահետազոտական ճամբարներ - ջոկատային, լողավազանային , հասարակական նախագծեր
12. Ամառային պարտեզների գործունեություն

Ուսումնական օրացույցով նախատեսված արձակուրդների ընթացքում սովորողը շարունակում է կրթությունը՝ հեռավար ուսուցման միջոցով: Համացանցի միջոցով սովորողները առաջադրանքներ են ստանում և կատարում: Կատարված աշխատանքը ուղարկվում է դասավանդողին, վերջինս էլ ստուգելով առաջադրանքը՝ պատասխանում է սովորողին:

### **Ուսումնական միջավայր. ուսումնական կաբինետ**

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը, լինելով «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի իրականացնողը, ստեղծել է վերջինիս իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ՝ բուսաբանական, կենդանաբանական, ջերմոց ուսումնական կաբինետներ:

Կաբինետը հանդիսանում սովորողներին համար հետազոտելու, ստեղծագործելու գործնական նոր դաշտ: Գործում է ձկուն կապ լաբորատորիաների միջև՝ ջերմոցում աճեցրած և բազմացրած բույսերը, սերմերը սովորողի կողմից հետազոտվում են բուսաբանական լաբորատորիայում, որի արդյունքում սեր, հետաքրքրություն է առաջանում դեպի հետազոտությունը և հետազոտության շնորհիվ ստացած ողջ տեղեկատվական զինանոցը սովորողը կարող է ուղղել նորը ստեղծելու և հայտնաբերելու գործին:

**Բույսերին վերաբերվող թեմաների** ուսուցումը իրականացվում է բուսաբանական կաբինետում, որն ապահովված է վերը նշված ունակությունները իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով՝ այն զինված է տեղեկատվական տեխնիկայով (պրոյեկտոր,

համակարգիչ, համացանց), մանրադիտակներով, հերբարիումներով:

**Կենդանիների վերաբերյալ թեմաների** ուսուցումը կազմակերպվում է կենդանաբանական կաբինետում, որը համալրված է կենդանիների տարատեսակ «բանակով», այսինքն՝ տրված յուրաքանչյուր տեսական գիտելիք ամրապնդվում է գործնական աշխատանքով: Սովորողը նաև ստանում է իրեն շրջապատող բույսերի, կենդանի օրգանիզմների վերաբերյալ լրացուցիչ իմացություններ և հմտություններ (բույսերի և կենդանիների խնամք, բույսը որպես դեղամիջոց, նրանց առաջացրած հիվանդությունները և այլն), որոնք, անկախ անհատի ստացած մասնագիտությունից կիրառելի են կյանքում:

**Ջերմոց-ուսումնական կաբինետում**, իրականացնում ենք նաև տեխնոլոգիայի մաս կազմող բույսերի խնամքի դասընթացը, սովորողների ընտրությամբ գործունեությունը:

1. Տարեսկզբին կատարում ենք մաքրման, վերադասավորման աշխատանքները՝ հաշվի առնելով սովորողների ցանկությունները և առաջարկները, ինչի արդյունքում նրանք ձեռք են բերում կոմպոզիցիաներ ստեղծելու հմտություններ:

2. Նախօրոք պատրաստում ենք թաղարներ՝ բազմացման նպատակով նախատեսված կտրոնների համար:

3. Հողը հումուսացնում ենք արդեն ավանդական դարձած միջոցներով:

ա) չորացած տերևները լցնում ենք հողի մեջ փորած փոսը և ծածկում, որոշ ժամանակ թողնելուց հետո ստանում ենք հումուսացված հող:

բ) այրում ենք չորացած ճյուղերը և ստացված մոխրով պարարտացնում հողը:

4. Երեխաների հետ միացյալ ուժերով անընդհատ թարմացնում ենք մեր ունեցած ծաղիկների տեսականին:

ա) Իրականացնում ենք նրանց բազմացումը և արդեն հասունացած կտրոնների տնկումը ծաղկամաններում: Կիրառում ենք բույսերի բազմացման բազմազան եղանակներ:

բ) սովորողները պարարտացնում, փխրեցնում են հողը, ջրում և նախօրոք պատրաստած կտրոնները տնկում թաղարի մեջ:

գ) Պարբերաբար հետևում և խնամում են կտրոնները, երբ կտրոնները արմատներ են տալիս, աճում՝ տեղափոխում ենք նրանց համար նախատեսված կավե ծաղկամանների մեջ:

5. Ծաղկամանների ձևավորման համար այցելում ենք դիզայնի և խեցեգործության դասընթացների: Մեր աճեցրած նոր ծաղիկների համար կավե ծաղկամաններ պատրաստում են երեխաները խեցեգործարանում՝ խեցեգործության ժամերին : Այսինքն գործում է անընդհատ գործնական կապ ջերմոց լաբորատորիայի **և խեցեգործարանի** միջև:

## **Սովորողի ձեռք բերած գիտելիքների և կարողությունների գործնական կիրառությունների ձևերը (ուսումնա-հասարակական նախագծեր)**

Կիրառելով թվարկված հմտությունները՝ սովորողները ձեռք են բերում մեծ պատասխանատվության զգացում. նրանց աշխատանքից է կախված այդ անպաշտպան էակների աճն ու զարգացումը: Այդ ամենը գիտակցելով՝ նրանք դրսևորում են առավելագույն ուշադրություն և հոգատարություն, ինչու չէ, նաև մեծ համբերատարություն, արդյունքում ստանում ենք երեխաների ձեռքերով տնկված և խնամված ծաղիկներ, ինչն էլ ծննդյան տոներին և այլ առիթներով սիրով նվիրում ենք մեր ընկերներին, ուսուցիչներին և մեր հյուրերին :Ընտրությամբ գործունեության խումբը մասնակցում է նաև ուսումնա-հասարակական աշխատանքներին, խնամում են դպրոցին կից պարտեզները, սովորում պահպանել շրջակա միջավայրը, իրենց վարքով օրինակ ծառայում իրենց ընկերների համար որի մասին հաշվետվությունը, նյութը կամ ռեպորտաժը պատրաստվում և տեղադրվում է կայքում:

Ընտրության խմբի սովորողները պարտադիր մասնակցում են Մեդիաօլիմպիադաներին՝ իրենց ընտրած գործունեության առարկայից: [www.olimp.mskh.am/](http://www.olimp.mskh.am/) կայքից նրանք ընտրում են համապատասխան առաջադրանքները , կատարում և ուղարկում նույն հասցեով:

## **Դասարանում և տանը ուսումնական պարապմունքի, ինքնակրթության կազմակերպման**

Դասարանական աշխատանքը առավել արդյունավետ իրականացվում է մրցակցության մտնողորտի ստեղծման շնորհիվ, որը սովորողներին համախմբելու, կոլեկիվ գործելու լավագույն մեթոդ է : Դասարանը բաժանվում է խմբերի և յուրաքանչյուրին տրվում է համապատասխան հանձնարարություն՝ հաշվի առնելով տվյալ խմբի հետաքրքրությունը և կարողությունները: Մեկը մյուսին գերազանցելու, բարձր գնահատականի արժանանալու նպատակով սովորողները ավելի հաճույքով են աշխատում և դասարանում ստեղծվում է գործնական, աշխույժ մթնոլորտ: Շատ օգտակար են տարբեր կայքերի միջոցով խաղերի և վարժությունների առցանց կատարումները:

Սովորողներին նաև տրվում է ուսումնական կայքերի հղումների ցանկ, որոնցից օգտվելով սովորողը զբաղվում է ինքնակրթությամբ՝ ստանում է որևէ տնային առաջադրանք և ինքնուրույն պատրաստում նյութ, որը հետագայում ներկայացվում,բացատրվում է դասարանում:

## **Գնահատում**

Գնահատումը կարվում է 10 բալանոց համակարգով.

- Ինքնուրույն կատարած ուսումնական նյութեր
- Միջոցառումներին մասնակցություն
- Մեդիաօլիմպիադային մասնակցություն
- Ուսումնա-հասարակական աշխատանքներին մասնակցություն
- Կայքում տեղադրված նյութեր

